**Արձանագրության 3**

**Նուբարաշեն վարչական շրջանում գյուղատնտեսական տոնավաճառների տաղավարների արդիականացման աշխատանքների ձեռքբերման ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/10 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի**

ք. Երևան

21.03.2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գևորգյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Պետրոսյան /գնահատող/, Ա. Երմազյան /գնահատող/ Թ. Բերբերյան /բացող/, Հ. Ապրեսյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

## 1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

---

(Գ. Գևորգյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը /գերազանցում է մասնակցի գնային առաջարկի մեկ տոկոսը/:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի՝ «Նուբարաշեն» ՓԲԸ-ի հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:*

## 2. Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին

---

(Գ. Գևորգյան)

Հաշվի առնելով, որ «Նուբարաշեն» ՓԲԸ-ն ընթացակարգի միակ մասնակից է և մասնակցի հայտը մերժվում է՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած և հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

Հանձնաժողովի Նախագահ՝ ---------------------------------------- Գ. Գևորգյան

Անդամներ՝ ---------------------------------------- Թ. Բերբերյան

---------------------------------------- Տ. Պետրոսյան

---------------------------------------- Հ. Ապրեսյան

---------------------------------------- Ա. Երմազյան

Քարտուղար՝ ---------------------------------------- Ա. Համբարձումյան